

ՏԵՂԵԿԱԼՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՆԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 210. Ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքներ իրացնելը

(վերնագիրը լրաց. 26.10.10 ՀՕ-147 Ն, փոփ. 16.05.16 ՀՕ-83 Ն)

1. Ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքներ իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով կազմում է հիսուն հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկից հազարապատիկի չափով:

2. Նույն արարքը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով կազմում է հինգ հարյուր հազար դրամ և ավելի՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված արարքները, որոնք կատարվել են պատասխանատու անձի կողմից՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկի չափով:

(210-րդ հոդվածը փոփ. 10.06.09 ՀՕ-149 Ն, լրաց. 26.10.10 ՀՕ-147 Ն, փոփ., լրաց. 22.12.10 ՀՕ-11 Ն, փոփ. 16.05.16 ՀՕ-83 Ն)

Հոդված 211. Ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման կանոնները խախտելը

(վերնագիրը լրաց. 26.10.10 ՀՕ-147 Ն, խմբ. 16.05.16 ՀՕ-83 Ն)

1. Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների՝ մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացառող ձևով կամ առանց դրանց վերաբերյալ սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով գրանցումների կատարման կամ ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների գծով էլեկտրոնային եղանակով կամ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով կատարված գրանցումներին չհամապատասխանող դրոշմավորման ենթակա ապրանքներն օտարելու դեպքում, եթե օտարման համար նախատեսված վայրում գտնվող այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ նշված չլինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով որոշված) գներով կազմում է հիսուն հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ՝

դրոշմավորման պարտավորություն կրող անձը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկից հազարապատիկի չափով:

2. Նույն արարքը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ նշված չլինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով որոշված) գներով կազմում է հինգ հարյուր հազար դրամ և ավելի՝

դրոշմավորման պարտավորություն կրող անձը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մեկ հազար հինգհարյուրապատիկի չափով:

~~3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված արարքները, որոնք կատարվել են պատասխանատու անձի կողմից՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքիսկապարսպատիկի չափով: (211-րդ հոդվածը փոփ. 10.06.09 ՀՕ-149-Ն, լրաց. 26.10.10 ՀՕ-147-Ն, լրաց., փոփ. 22.12.10 ՀՕ-11-Ն, խմբ. 16.05.16 ՀՕ-83-Ն, 21.12.17 ՀՕ-296-Ն)~~

Հոդված 208.

Ակցիզային դրոշմանիշեր և (կամ) դրոշմապիտակներ կեղծելը կամ իրացնելը

(վերնագիրը լրաց. 26.10.10 ՀՕ-147-Ն, փոփ. 16.05.16 ՀՕ-83-Ն)

4. Սույն օրենսգրքի 208-րդ, 209-րդ, ~~210-րդ և 211-րդ~~ հոդվածներով նախատեսված պատասխանատու անձ է համարվում օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ղեկավարման կամ կազմակերպման լիազորություն ունեցող անձը, որը ենթակա է քրեական պատասխանատվության նշված հոդվածներով նախատեսված արարքների կատարման համար՝ անկախ խախտման սահմանային չափից:
(208-րդ հոդվածը փոփ. 10.06.09 ՀՕ-149-Ն, լրաց. 26.10.10 ՀՕ-147-Ն, 22.12.10 ՀՕ-11-Ն, փոփ. 16.05.16 ՀՕ-83-Ն)